

## Յայտարարութիւն դադրեցնելու Տարիայի կործանումը

\*\*\*\*\*

Վարչակարգին ուժերը տակաւին կը գործածեն անխտրական քանդիչ բնոյթ ունեցող զենքերը ինչպէս պայթուցիկ տակառները և ողկուզային ռումբերը, Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ, հիւսիսէն Հալէպէն սկսեալ մինչեւ հարաւ Տարիյա անցնելով Քաֆար Չիթայէն, չնայած միջազգային հասարակութեան և մարդկային իրաւունքներու կազմակերպութիւններուն կրկնական պահանջներուն վարչակարգէն, որպէսզի դադրեցնէ գործածումը այս տեսակի զենքերը: Այս զենքերը պատճառեց սպաննում հարիւրաւոր անմեղ քաղաքացիներու և ամբողջովին կործանում շրջաններու, ուր կը հաղորդեն լուրերը թէ աւելի քան 200 պայթուցիկ տակառներ նետուեցան երկու ամսուայ ընթացքին Տարիյայի վրայ, որ պատճառեց կործանումը այս քաղաքին աւելի քան կէսը: Ազգային Համակարգող Մարմինը խստօրէն կը դատապարտէ վարչակարգին ուժերու շարունակ գործածումը պայթուցիկ տակառներու և միջազգայինօրէն արգիլուած ողկուզային ռումբերու, և կը պահանջէ դադրեցնել գործածումը անմիջապէս ... և թող իմանայ վարչակարգը և իր բաժանորդները Սուրիոյ կործանումին մասնակից զինեալ խմբակները թէ բռնութիւնը չի լուծեր Սուրիական տագնապը, այլ բանակցային քաղաքական լուծումը միայն կարող է փրկել ինչ որ մնացեր է Սուրիայէն և իր ժողովուրդէն:

\*\*\*\*\*

Ողորմութիւն նահատակներուն և արագ ապաքինում վիրաւորներուն:

\*\*\*\*\*

Ազգային Համակարգող Մարմին Սուրիոյ մէջ

Տեղեկատուական գրասենեակ

03/03/2014